



Կարգապահական գործ թիվ ԿԳ-17169

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 195-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/120-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՎԱՀԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Նելլի Հարությունյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Հրանտ Անանյանի, Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Հարություն Հարությունյանի, Կարեն Մեծլումյանի քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի, քննության առնելով փաստաբան Վահան Հովհաննիսյանին (արտոնագիր թիվ 632) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահին 07.11.2017թ. տրամադրված տեղեկանքի՝ փաստաբան Վահան Հովհաննիսյանն ունի 10.000 (տասը հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2017թ. օգոստոսից սեպտեմբեր (ներառյալ) ամիսների համար:

07.11.2017թ. դրությամբ Վահան Հովհաննիսյանի պարտքը կազմում է 225.000 (երկու հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ՝ հաշվարկված 2014 թվականի հունվարից 2017 թվականի սեպտեմբեր (ներառյալ) ամիսների համար:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

08.11.2017թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թիվ 423-Ա/ԿԳ-17169 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Վահան

Հովհաննիսյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Կանոնագիրք**) 2.9.1 ենթակետի խախտման հատկանիշներով:

09.11.2017թ. կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդի անդամ՝ Նելլի Հարությունյանին (նիստը նախագահող):

16.11.2017թ. գործը ընդունվել է վարույթ: Խորհրդի նիստը տեղի է ունեցել 12.12.2017թ-ին, ժամը 18:24-ին:

3. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Պալատում առկա փաստաբանների ցուցակում և փաստաբանի անձնական գործում փաստաբան Վահան Հովհաննիսյանի որևէ էլեկտրոնային փոստի հասցե առկա չէ: www.advocates.am կայքում Վահան Հովհաննիսյանի անձնական էջում նշված է հեռախոսահամար, որը չի գործում: Փաստաբան Վահան Հովհաննիսյանին փոստային ծառայության միջոցով ուղարկվել է նիստի մասին ծանուցագիր « Լոռու մ., ք. Վանաձոր, Տիգրան Մեծ, 34-106» հասցեով, սակայն փոստային ծրարը վերջինիս կողմից չի ստացվել: Պալատի աշխատակազմը փաստաբան Վահան Հովհաննիսյանին խորհրդի նիստի և ժամանակի մասին ծանուցել է հրապարակային կարգով՝ նիստի ծանուցումը Հայաստանի Հանրապետություն օրաթերթի 08.12.2017թ. թիվ 220 (6741) համարում հրապարակելու միջոցով:

4. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Վահան Հովհաննիսյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 20.10.2006թ. (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 12.12.2017թ. տրամադրված տեղեկանքով),

2) փաստաբան Վահան Հովհաննիսյանն ունի 10.000 (տասը հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2017թ. օգոստոսից 2017թ. սեպտեմբեր (ներառյալ) ամիսների համար (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 07.11.2017թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահին տրամադրված տեղեկանքով),

3) փաստաբան Վահան Հովհաննիսյանն իր անդամավճարի պարտքը չի մարել (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 12.12.2017թ. Խորհրդին տրամադրված տեղեկանքով):

5. Պատասխանողի անձր բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 12.12.2017թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Վահան Հովհաննիսյանի (արտոնագիր 632,

ստացված՝ 20.10.2006թ.) նկատմամբ 2006-2017թթ. ընկած ժամանակահատվածում 10 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ, որոնցից մեկը 29.08.2008թ. թիվ 14/5 որոշմամբ կարճվել է (կիրառվել է արտոնություն): Վահան Հովհաննիսյանը 25.03.2015թ. թիվ 40/Ա որոշմամբ անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար ենթարկվել է պատասխանատվության նկատողության, իսկ 15.04.2015թ. ԿԳ/55-Ա որոշմամբ՝ խիստ նկատողության ձևով: 28.09.2015թ. թիվ ԿԳ/124-Ա, 06.10.2015թ. թիվ ԿԳ/143-Ա, 03.03.2015թ. թիվ ԿԳ/35-Ա, 16.01.2017թ. թիվ ԿԳ/3-Ա, 04.04.2017թ. թիվ ԿԳ/39-Ա, 22.08.2017թ. թիվ ԿԳ/79-Ա, 05.12.2017թ. թիվ ԿԳ/109-Ա որոշումներով անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար Վահան Հովհաննիսյանը ենթարկվել է պատասխանատվության տուգանքի ձևով, համապատասխանաբար՝ 10.000 ՀՀ դրամի չափով, 15.000 ՀՀ դրամի չափով, 20.000 ՀՀ դրամի չափով, 25.000 ՀՀ դրամի չափով, 30.000 ՀՀ դրամի չափով, 35.000 ՀՀ դրամի չափով, 40.000 ՀՀ դրամի չափով:

6. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Վահան Հովհաննիսյանին պետք է ենթարկել կարգապահական պարասխանատվության, հետևյալ պարճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար: Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ:

Համաձայն Կանոնագրքի 2.9.1. կետի՝ Փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ. թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի (այսուհետև Կարգ) 7-րդ կետի՝ Փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը, իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է՝ Ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պարասխանատվության:

Վերոնշյալ կանոնների վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանը ենթակա է պատասխանատվության:

Փաստաբան Վահան Հովհաննիսյանը խախտել է վերը նշված կանոնների պահանջները, որն ապացուցվում է գործում առկա՝ ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից տրամադրված տեղեկանքներով: Ավելին՝

կարգապահական վարույթ հարուցելուց հետո էլ նա շարունակել է խախտել վերը նշված նորմերի պահանջները և կարգապահական վարույթը Խորհրդում լավելու ժամանակ էլ վերը նշված խախտումն առկա էր:

Խորհուրդը կարգապահական տույժ նշանակելիս հաշվի է առնում հետևյալ հանգամանքները:

Օրենքի 39.9 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

- 1) նկատողություն.
- 2) խիստ նկատողություն.
- 3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների.
- 4) տուգանք.
- 5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Նույն հոդվածի հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում տույժի տեսակը փաստաբանների պալատի խորհուրդը կարող է նշանակել միայն դիտարկությանը կատարված ակնհայտ կոպիտ կարգապահական խախտման դեպքում:*

Կանոնագրքի 9.1.1 ենթակետի համաձայն՝ *մեկ տարվա ընթացքում երեք անգամ կարգապահական տույժի ենթարկված փաստաբանի կողմից սույն կանոնագրքի որևէ կանոնի խախտում թույլ տալը համարվելու է **ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում:***

Օրենքի 39.9 հոդվածի 1-ին մասում շարադրված կարգապահական տույժերը սահմանված են ըստ խստության աստիճանի և դրանց կիրառումը հիմնված է պատասխանատվության անհատականացման սկզբունքի վրա, որն ամփոփ կերպով սահմանված է Օրենքի նույն հոդվածի 2-րդ մասում:

Պալատի խորհուրդը գտնում է, որ Օրենքով սահմանված կարգապահական տույժերի կիրառումը չպետք է լինի ինքնանպատակ, այլ պետք է ուղղված լինի կարգապահական փաստաբանի վարքագծի ուղղմանը և համապատասխանեցմանը փաստաբանության ինստիտուտի բարձր հասարակական կարգավիճակով պայմանավորված էթիկական չափանիշներին, որոնք նախատեսված են Օրենքով և Կանոնագրքով:

Միևնույն ժամանակ պատասխանատվության միջոցներ կիրառելիս պետք է առաջնորդվել պատասխանատվության անհատականացման սկզբունքից բխող համաչափության պահանջով՝ հաշվի առնելով կարգապահական

պատասխանատվության կանչվող փաստաբանի կողմից կատարված իրավախախտման ծանրությունը, հետևանքները, փաստաբանի մեղքի աստիճանը, նախկինում կարգապահական տույժեր ունենալու հանգամանքը և փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ, որոնք կարող են ինչպես խստացնել, այնպես էլ մեղմացնել նրա նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցը:

Պալատի, որպես փաստաբանների վարքագծի նկատմամբ կարգապահական վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից կատարված խախտմանը և խախտողի անձին համարժեք և համաչափ տույժի ընտրությունը շատ կարևոր է ինչպես փաստաբանի իրավաչափ վարքագծի երաշխավորման և փաստաբանության առջև դրված խնդիրների լուծման, այնպես էլ փաստաբանի ներքին և արտաքին անկախության նկատմամբ անհամաչափ միջամտությունից խուսափելու տեսանկյունից:

Սույն համատեքստում դիտարկելով փաստաբանի նկատմամբ «*փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում*» կարգապահական տույժի կիրառման հարցը՝ օրենսդիրն առավել բարդ կառուցակարգ է սահմանել պատասխանատվության սույն միջոցը կիրառելու համար. Պալատի խորհուրդը տույժի սույն տարատեսակը կարող է կիրառել միայն այն դեպքերում, երբ առկա է **ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում** և այն փաստաբանի կողմից կատարվել է **դիտավորությամբ**:

Կարգի 9.1.1 ենթակետով ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում է համարվում մեկ տարվա ընթացքում 3 անգամ կարգապահական պատասխանատվության ենթարկված փաստաբանի կողմից ևս մեկ անգամ կարգապահական խախտում կատարելը:

Սույն պարագայում Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ 2017թ. ընթացքում Պատասխանողը 4 անգամ ենթարկվել է կարգապահական տույժի, չհաշված սույն կարգապահական գործը, անդամավճարները չմուծելու համար: Ավելին՝ Պալատի գլխավոր հաշվապահի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ անդամավճարի գծով Պատասխանողի պարտքը Պալատի հանդեպ 12.12.2017թ. դրությամբ կազմում է 235.000 ՀՀ դրամ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սկսած 2014թ.՝ Պատասխանողը 9 անգամ կարգապահական պատասխանատվության է ենթարկվել անդամավճարը չմուծելու համար՝ Պալատը եկել է այն համոզման, որ Պատասխանողի կողմից նշված կարգապահական խախտումը չի կարող համարվել մեղքի անզգույշ ձևով կատարված, քանի որ անդամավճար կատարելը հանդիսանում է Պալատի՝ որպես փաստաբանների համայնքի շահերի պաշտպանությամբ զբաղվող և փաստաբանների ինքնակառավարման հիմնական մարմինը հանդիսացող կազմակերպության առջև փաստաբանի հիմնական պարտականություններից մեկը, որի կատարումն ուղղակիորեն առնչվում է փաստաբանական համայնքի հետ փաստաբանի կայուն կապի առկայության և փաստաբանական գործունեության իրականացման հետ: Շուրջ 3 տարի անընդմեջ անդամավճար չմուծելը վկայում է փաստաբանի կողմից Պալատի հետ հարաբերությունները փաստացի խզելու և

փաստաբանությամբ չզբաղվելու մտադրության (դիտավորության) մասին: Սույնը հիմնավորվում է նաև Պատասխանողի հետ որևէ միջոցով կապվելու անհնարինությունը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կանոնագրքի 9.1.1 ենթակետի, Կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Վահան Հովհաննիսյանին (արտոնագիր թիվ 632) մեղավոր ճանաչել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.9.1. ենթակետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Վահան Հովհաննիսյանի (արտոնագիր թիվ 632) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Վահան Հովհաննիսյանին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Նելլի Հարությունյան

**12 դեկտեմբերի 2017թ.
թիվ ԿԳ/120-Ա
ք. Երևան**